ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մարտ, 2024

Բովանդակություն

Բովանդակություն 1

Ֆինանսական դիրք 2

Վարկային պորտֆել և համեմատականներ 3

Տրամադրված վարկերի ծավալը 3

Տրամադրված վարկերի քանակը 4

Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ 5

Վարկերի կառավարում 6

Վերլուծական գործակիցներ 8

Ֆինանսական դիրք

- **Ակտիվներ:** ՀՀ ՎԿԱ անդամների համախառն ակտիվները 2024թ.-ի Մարտի 31-ի դրությամբ կազմել են 204.46 մլրդ դրամ՝ 2023թ.-ի Մարտի նկատմամբ աճելով 13.5%-ով, իսկ 2024թ.-ի Փետրվարի նկատմամբ՝ 1.0%-ով: (Գծ.1):
- **Վարկային Պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը 2024թ.-ի Մարտի 31-ի դրությամբ կազմել է 156.49 մլրդ դրամ՝ նախորդ տարվա Մարտի նկատմամբ աճելով 16.4%-ով, իսկ 2024թ. Փետրվարի նկատմամբ՝ 1.5% (Գծ.1):
- **Կապիտալ:** ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալը 2024թ.-ի Մարտի վերջի դրությամբ կազմել է 73.31 մլրդ դրամ՝ 2023թ.-ի Մարտի նկատմամբ աճելով 15.3%-ով, իսկ 2024թ.-ի Փետրվարի նկատմամբ աճելով 1.9%-ով (Գծ.1):

Գծապատկեր 1. ՀՀ ՎԿԱ անդամների ֆինանսական դիրքը 2023-2024թթ. Մարտի վերջի դրությամբ



Վարկային պորտֆել և համեմատականներ

Տրամադրված վարկերի ծավալը

- 2024թ.-ի Մարտ ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 12. 63 մլրդ դրամի վարկ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 21.1%-ով, իսկ 2024թ.-ի Փետրվարի նկատմամբ աճել է 1.9%-ով (Գծ. 2):

Գծապատկեր 2. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2023 և 2024 թթ.-երի Հունվար-Մարտ ամիսներին տրամադրված վարկերի ծավալը



Տրամադրված վարկերի քանակը

- 2024թ.-ի Մարտ ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 66,530 վարկ, որը նախորդ ամսվա նկատմամբ աճել է 4.0%-ով, իսկ 2023թ.-ի Մարտի նկատմամբ աճել է 26.2%-ով (Գծ. 3):
- 2024թ.-ի Մարտ ամսվա վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամներն ունեցել են 201,886 ակտիվ վարկառուներ: Ակտիվ վարկառուների քանակը 2023թ.-ի Մարտի նկատմամբ աճել է 28.5%-ով, իսկ 2024թ. -ի Փետրվարի նկատմամբ՝ 1.3%-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2024թ.-ի Մարտին տրամադրված վարկերի միջին մեծությունը կազմել է 190 հազար դրամ, իսկ վարկային պորտֆելի միջին վարկի մեծությունը կազմել է 775 հազար դրամ: Նույն ցուցանիշները 2023թ.-ի Մարտին կազմել են համապատասխանաբար՝ 198 և 855-հազարական դրամ (Գծ. 4):

Գծապատկեր 3. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2023 և 2024 թթ.-երի Հունվար-Մարտ ամիսներին տրամադրված վարկերի քանակը



Գծապատկեր 4. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի միջին մեծություն



Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ

- 2024թ.-ի Մարտի դրությամբ Ասոցիացիայի անդամները միասին վերցրած ՀՀ ամբողջ տարածքում ունեցել են 149 մասնաճյուղ, որը, համեմատած 2023թ.-ի Մարտի հետ, նվազել է 9-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամները 2024թ.-ի Մարտի դրությամբ ունեցել են 431 վարկային մասնագետ, որը, համեմատած 2023թ.-ի Մարտի հետ, նվազել է 23-ով:
- 2024թ.-ի Մարտին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի գծով մեկ վարկային մասնագետի հաշվով միջին վարկի մեծությունը կազմել է 29.31 մլն դրամ, նախորդ ամսին՝ 28.95 մլն դրամ, իսկ 2023թ.-ի Մարտին այս ցուցանիշը կազմել է ևս 22.98 մլն դրամ (Գծ. 5):

- 2024թ.-ի Մարտի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով կազմել է 363.09 մլն դրամ, նախորդ ամսվա 360.40 մլն դրամի և 2023թ.-ի Մարտին 296.06 մլն դրամի համեմատ (Գծ. 5):

Գծապատկեր 5. ՀՀ ՎԿԱ անդամների տրամադրված միջին վարկը և վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով



Վարկերի կառավարում

- **Մինչև 30 օր ժամկետանց պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը 2024թ.-ի Մարտի վերջի դրությամբ կազմել է 1,466 մլն դրամ, նախորդ ամիս՝ 1,869 մլն դրամ և 2023թ.-ի Մարտին՝ 1,296 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը աճել է 13.1%-ով, իսկ 2024թ.-ի Փետրվարի նկատմամբ նվազել է 21.6%-ով: 2024թ.-ի Մարտի վերջի դրությամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 0.94%-ը, 2023թ.-ի Մարտին ևս կազմել է 0.96% (Գծ. 6):

- **Ժամկետանց պորտֆել 30 օրից ավել:** ՀՀ ՎԿԱ անդամների 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը 2024թ.-ի Մարտի վերջի դրությամբ կազմել է 4,236 մլն դրամ, նախորդ ամիս՝ 3,782 մլն դրամ և 2023 թ.-ի Մարտին՝ 3,493 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը աճել է 21.3%-ով, իսկ 2023թ.-ի Փետրվարի նկատմամբ աճել է 12.0%: 2024թ.-ի Մարտի վերջի դրությամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 2.71%-ը, 2023թ.-ի Մարտին՝ 2.60% (Գծ. 6):
- **Զուտ դուրսգրումներ:** 2024թ.-ի Մարտի վերջի դրությամբ Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է 540 մլն դրամ, նախորդ ամիս՝ 581 մլն դրամ և 2023թ.-ի Մարտին՝ 395 մլն դրամ: Զուտ դուրս գրված վարկերի ծավալը 2024թ.-ի Մարտին նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 7.2%-ով, իսկ 2023թ.-ի Մարտի նկատմամբ աճել է 36.6%-ով: Ասոցիացիայի անդամների սույն թվականի Մարտի զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է համախառն վարկային պորտֆելի 0.34%-ը, նախորդ ամիս՝ 0.38% և 2023թ.-ի Մարտին 0.29% (Գծ. 6):

Գծապատկեր 6. ՀՀ ՎԿԱ անդամների վարկերի ծավալները Մարտի 31-ի դրությամբ



Վերլուծական գործակիցներ

- 2024թ.-ի Մարտի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համախառն վարկային պորտֆելի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 76.5%, որը վկայում է այն մասին, որ ակտիվների ծանրակշիռ մեծամասնությունը ուղղվում է վարկավորմանը: Նույն ցուցանիշը 2023թ.-ի Մարտին կազմել է 74.6% (Գծ. 7):
- Սույն թվականի Մարտի դրությամբ Ասոցիացիայի անդամների ընդհանուր կապիտալի և վարկային պորտֆելի հարաբերակցությունը կազմել է 46.8%: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ Ասոցիացիայի անդամների վարկավորման ծավալի 47%-ը իրականացվում է սեփական կապիտալի հաշվին: Նույն ցուցանիշը 2023թ.-ի Մարտին կազմել է 47.3% (Գծ. 7):
- 2024թ.-ի Մարտի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 35.9%, որը վկայում է Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների բարձր կապիտալիզացիայի մասին: Նույն ցուցանիշը 2023թ.-ի Մարտին կազմել է 35.3% (Գծ. 7):
- Ընդհանուր պարտավորությունների և կապիտալի հարաբերակցության ցուցանիշը ցույց է տալիս միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունների չափը: Այս ցուցանիշը ցույց է տալիս նաև վարկային բիզնեսի կառավարման արդյունավետության մակարդակը: 2024թ.-ի Մարտ ամսվա դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համար այս գործակիցը կազմել է 1.79, այսինքն միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունները 1.8 անգամ գերազանցել է կապիտալի մակարդակը: Նույն ցուցանիշը նախորդ տարվա Մարտի համար կազմել է 1.83:

Գծապատկեր 7. ՀՀ ՎԿԱ անդամների վերլուծական գործակիցներ


ՀՀ ՎԿԱ անդամների վերլուծական գործակիցներ
100.0%
80.0%
60.0%
40.0%
20.0%
0.0%
Վարկային պորտֆել/ակտիվներ
Կապիտալ/վարկային պորտֆել
Կապիտալ/ակտիվներ
2023 74.6% 47.3% 35.3%
2024 76.5% 46.8% 35.9%


Տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն ու քանակությունը
52,699
55,007
59,697
55,538
55,861
55,458
53,583
59,106
62,924
70,134
63,592
63,943
66,530
Mar-23
Apr-23
May-23
Jun-23
Jul-23
Aug-23
Sep-23
Oct-23
Nov-23
Dec-23
Jan-24
Feb-24
Mar-24


Ժամկետանց վարկերի դինամիկան 03/2023-03/2024
PAR 1-30 days
PAR more than 30 days
5,000,000
4,000,000
3,000,000
2,000,000
1,000,000
-
Mar-23
Apr-23
May-23
Jun-23
Jul-23
Aug-23
Sep-23
Oct-23
Nov-23
Dec-23
Jan-24
Feb-24
Mar-24